ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«02» մարտի 2015թ. N 46

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 8-Ի N 238 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի երկրորդ մասի 1-ին կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Արաքսի Զորիկ Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2015 թվականի փետրվարի 24-ի N 29 գրությունը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի 2015 թվականի փետրվարի 24-ի զեկուցագիրը

որոշում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2010 թվականի հուլիսի 8-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների խորհուրդների կազմերը հաստատելու մասին» N 238 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1)որոշմամբ հաստատված հավելվածում՝

ա. «Արաքսի Զորիկ Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի կազմում «7.Վարդանյան Արթուր – ծնող» բառերը փոխարինել «7.Սահակյան Անի – ծնող» բառերով:

բ. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Ֆերիկի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի կազմում «2.Մութոյան Մելինե – մարզպետարան» բառերը փոխարինել «2.Գաբրիելյան Ռուզաննա – մարզպետարան» բառերով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ